ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 67

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ "Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի ավագանու 06/09/2022 թ-ի "Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թ-ի մայիսի 03-ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին" թիվ 27-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

2.Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2022 թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 68

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքով, "Քաղաքաշինության մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 29/04/2021 թ-ի թիվ 698-Ն հրամանով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-043-0234-0004 ծածկագրի տակ գտնվող 1,5459հա "խոտհարք" նպատակային նշանակության հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 14/04/2004 թ-ի թիվ 457 որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահի 698-Ն հրամանով նշված հողամասի նկատմամբ ճանաչել Լերմոնտովո համայնքի սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**